



# ՀՀ ԵԿՈՂՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ

2015  
ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱԽԱՌԸ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ .....	3
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	6
3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	6
4. ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ	7
5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	4
6. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7
6.1 Առևտրի շրջանառություն	7
6.2 Ծառայություններ	8
6.3 Այլ ծառայություններ	9
7. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	10
8. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀՈՍՔԵՐ	13
9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ	15
10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ 2015-2016թթ ԻՆԴԵՔՍՈՒՄ	16

## 1. ՀԱՄԱԽԱՐԻԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Համաշխարհային տնտեսության տարեսկզբի զարգացմումների համատեքստում միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվեց Հայաստանի 2015թ. տարեկան ՀՆԱ կանխատեսումները (Համաշխարհային բանկ՝ 0.0%, Արժույթի միջազգային հիմնադրամ՝ -1.0%, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ՝ -1.5%):

2015թ. հունվար-սեպտեմբերին գրանցվել է համախառն ներքին արդյունքի 3.5% աճ (բացարձակ արժեքով կազմել է՝ 3,498.9 մլրդ դրամ կամ 7,324.4 մլն ԱՄՆ դոլար), ինչը թույլ է տալիս պնդել, որ 2015թ. տարեկան աճը կմնա 3.5%-ի մոտակայքում, ինչն առավել մոտ է Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեի հիմքում դրված ՀՆԱ կանխատեսվող 4.1% ցուցանիշին:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից տարեսկզբին 2015թ. համար կանխատեսվել էր<sup>1</sup> ՀՆԱ  $3.4 \pm 0.3\%$  աճ:

## ՀԱՄԱԽԱՐԻՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

	2010-9	2011-9	2012-9	2013-9	2014-9	2015-9
<b>Համախառն ներքին արդյունք, մլրդ դրամ</b>	<b>2328.9</b>	<b>2574.8</b>	<b>2762.7</b>	<b>2915.3</b>	<b>3300.0</b>	<b>3499.0</b>
<b>Համախառն ներքին արդյունք, մլն ԱՄՆ դոլար</b>	<b>6537.6</b>	<b>6812.3</b>	<b>7472.9</b>	<b>7284.5</b>	<b>8021.4</b>	<b>8517.6</b>
<b>Համախառն ներքին արդյունքի աճի տեմպը, %</b>	<b>102.0</b>	<b>104.4</b>	<b>107.6</b>	<b>102.8</b>	<b>103.8</b>	<b>103.5</b>

Համախառն ներքին արդյունքը 2015թ. հունվար-սեպտեմբերին ԵԱՏՄ-ում նվազել է 3.0%-ով, ԱՊՀ-ում՝ -3.3%, ԵՄ -28' գրանցվել է 1.8% աճ:

- ❖ **ԵԱՏՄ Երկրներից՝ Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ-ն նվազել է 3.8%-ով, իսկ Բելառուսիայինը՝ 3.7%-ով, աճ է գրանցվել Ղրղզստանում՝ 6.3% և Ղազախստանում 1.0%:**
- ❖ **ԱՊՀ Երկրներից Ուզբեկստանում գրանցվել է 8.0%, Թուրքմենստանում՝ 7.5%, Աղրբեջանում 3.7% աճ:**
- ❖ **ԵՄ Երկրներից՝ աճ է գրանցվել հետևյալ Երկրներում՝ Չեխիա՝ 4.2%, Անգլիա՝ 2.4%, Նիդերլանդներ՝ 2.1%, Ֆրանսիա՝ 1.1%, Ավստրիա՝ 0.7%, Իտալիա՝ 0.7%, Լատվիայում գրանցվել է 2.6%, Լիտվայում՝ 1.5%, իսկ Էստոնիայում՝ 1.3% աճ:**
- ❖ **Այլ Երկրերից Թուրքիայում գրանցվել է 11.1%, Զինաստանում՝ 6.9%, Վրաստանում՝ 2.7% աճ:**

<sup>1</sup> Կանխատեսումն իրականացվել է Երկու մոդելների կիրառմամբ՝ ա) ավտոնոմ Էկոնոմետրիկ մոդելի (որը ներկայացվում է ռեգրեսիոն հավասարումների համակարգի տեսքով) և բ) ARIMA(1,2) մոդելի (կատարելով սխալների կառուցվածքային ձևափոխություն, ընդ որում ապացուցվել է, որ նմանատիպ ձևափոխությունը չի խախտում սպիտակ աղմուկ պրոցես լինելու անհրաժեշտ պայմանը)

Չնայած 2014թ. տարեվերջից և 2015թ. ընթացքում համաշխարհային տնտեսական ոչ բարենպաստ զարգացումների բացասական ազդակների 2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համախառն առաջարկը ձևավորվել է հիմնականում ի հաշիվ արտահանելի ճյուղերի:


ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԱՃ, %

	Աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %					
	2010-9	2011-9	2012-9	2013-9	2014-9	2015-9
ՀՆԱ	102.0	104.4	107.6	102.8	103.8	103.5
Արդյունաբերություն	109.7	112.1	109.4	105.5	100.0	106.8
Գյուղատնտեսություն	79.0	117.6	112.3	105.9	107.3	108.6
Շինարարություն	104.3	85.5	106.6	86.0	95.2	101.0
Առևտիք շրջանառություն	102.9	104.7	100.5	104.4	102.7	93.7
Ծառայություններ	106.6	106.5	108.3	105.0	106.7	103.5

Թեև հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է ավելացված արժեքի աճ, այնուամենայնիվ ՀՆԱ արդյունքի կառուցվածքում վերջինիս մասնաբաժինը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նվազել է 1.4 տոկոսային կետով, ինչը կարելի է բացատրել 2014թ. 9 ամիսների համեմատությամբ գյուղատնտեսական արտադրանքի գների նվազմամբ (գյուղատնտեսության ավելացված արժեքի դեֆյատորը 2015թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 90.0%):

ՀԱՄԱԿԱՌԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %


ՀՆԱ ԱՃՆ ԸՆՏԱՄԱՍՎԱԿԱՆԵՐԻ, %




Շինարարության ոլորտում 2014 և 2013թ.թ. 3-րդ եռամյակների նվազման դիմաց հաշվետու տարվա 3-րդ եռամյակում գրանցվել է ավելացված արժեքի 5.9% աճ:

**ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԱՃ, %**

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԱՃ, %**



2015թ. տարեսկզբին գրանցված համաշխարհային տնտեսական բացասական զարգացումները զսպող ազդեցությունն ունեցան ինչպես առևտրի, այնպես էլ ծառայությունների ոլորտի վրա: Մասնավորապես 2014թ. հունվար-սեպտեմբերի համեմատությամբ տրանֆերտների 31.9% անկումը, (այդ թվում ՌԴ-ից՝ 45.1%), ինչպես նաև բնակչությանը տրամադրվող սպառողական վարկերի ծավալի 0.3% նվազումը հանգեցրել է բնակչության տնօրինվող եկամտի նվազմանը, ինչն էլ պայմանավորել է առևտրի ծավալների նվազումը և ծառայությունների ոլորտի ավելացված արժեքի աճի դանդաղումը:



Առևտրի պարագայում նկատելի է նաև բազային էֆեկտ: Այսպես, 2014թ. տարեվերջին և 2015թ. 1-ին եռամսյակում արտարժութային շուկայում փոխարժեքների տատանումների, ինչպես նաև ԵԱՏՄ-ին միանալու հետ կապված՝ բնակչության կողմից ավտոմեքենաների գների աճի սպասումների արդյունքում 2014թ. ընթացքում գրանցվեց ավտոմեքենաների և սարքավորումների ներմուծման աճ (մասնավորապես 2013թ. համեմատությամբ 2014թ. ավտոմեքենաների ներմուծումն ավելացել է ավելի քան 5,000 հատու):

## 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

2015 թվականի հունվար-սեպտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱԶ) կազմել է 103.7%: Միաժամանակ, սեպտեմբեր ամսվա ՏԱԶ-ը օգոստոս ամսվա նկատմամբ կազմել է 109.8%, իսկ սեպտեմբերը նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ՝ 102.2%:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ, 2015թ., %


	Հ	Փ	Մ	Ա	Մ	Ը	Հ	Հ
Նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ (աճողական)	2.0	3.1	2.9	3.1	2.9	4.0	3.9	
Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	2.0	4.2	2.6	3.4	2.5	8.1	3.8	
Նախորդ ամսվա նկատմամբ	-51.5	9.9	13.0	3.4	6.6	16.2	9.4	

Գյուղատնտեսության աճի տեմպը կազմել է 111.3%, արդյունաբերությանը՝ 104.8%, ծառայություններինը՝ 102.5% և շինարարությանը՝ 100.1%: Առևտրի շրջանառությունը կրճատվել է 5.6%-ով:

## 3. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


Շինարարության աճի տեմպը կազմել է 100.1%: Ըստ ֆինանսավորման աղբյուրների շինարարության ծավալների աճ է գրանցվել մարդասիրական օգնությունների՝ աճի տեմպը 143.4%, միջազգային վարկերի՝ աճի տեմպը 119.9%, բնակչության միջոցների՝ աճի տեմպը 114.3% և կազմակերպությունների միջոցների հաշվին՝ աճի տեմպը 100.2% (ընդ որում՝ օտարերկրյա ներդրողների ֆինանսավորմամբ (տեսակարար կշիռը՝ 6.1%) շինարարության աճի տեմպը կազմել է 135.2%: Պետական բյուջեի և համայնքների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների գծով գրանցվել է՝ համապատասխանաբար 9.9% և 73.1% նվազում:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՃ, %



**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՆ  
ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, %**

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, %**



2014թ. 9 ամիսների համեմատությամբ 7.1 տոկոսային կետով նվազել է արդյունաբերության ոլորտում իրականացված շինարարության տեսակարար կշիռը, ինչը հիմնականում հետևանք է ընդհանուր շինարարության մեջ 7.0% տեսակարար կշիռ կազմող է «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղում իրականացված շինարարության 14.1%, «Մշակող արդյունաբերությունում» (տեսակարար կշիռ՝ 2.5%)՝ 64.5% և «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքների շահագործում» ենթաճյուղում (տեսակարար կշիռ՝ 2.3%)՝ 45.3% նվազման: Ընդհանուր շինարարությունում 6.4% տեսակարար կշիռ կազմող «Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղում գրանցվել; է 8.1% աճ:

Անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտի տեսակարար կշիռն ավելացել է 5.3 տոկոսային կետով (շինարարության աճը կազմել է 21.3%):


Կացություն և հանրային սննդի կազմակերում գործունեության տեսակում շինարարության ծավալներն աճել են 2.2 անգամ, իսկ տեսակարար կշիռ՝ 4.1 տոկոսային կետով:

#### 4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունում աճի տեմպը կազմել է 111.3%: Բուսաբուծության աճի տեմպը կազմել է 115.0%, անասնաբուծությունում՝ 104.1%, իսկ ձնկաբուծությունում՝ 126.0%: Բուսաբուծության աճը պայմանավորված է ընթացիկ տարվա բարենպաստ բնակլիմայական պայմաններով, պետական աջակցությամբ իրականացված ծրագրերով ցանքատարածությունների և վարելահողերի ավելացմամբ, ինչպես նաև ջերմոցային տնտեսությունների զարգացմամբ: Մասնավորապես, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածություններից հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերինը


2015թ. հուվար-հունիսին 2014թ. նոյեմբերին մշակաբույսերինը՝ 5.8%, կարտոֆիլինը՝ 3.0%, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 9.6%, բուստանային մշակաբույսերինը՝ 16.4% և կերային մշակաբույսերինը՝ 4.0%: Տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունները նվազել են 2.1%-ով: Ընդհանուր առմամբ ցանքատարածությունները կազմել են 351 219 հա՝ աճելով 5.6 %-ով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՏԵՄՊ, %



Գյուղատնտեսական արտադրանքի գերակշիռ մասը բաժին է ընկնում բուսաբուծությանը: 2011թ. սկսած վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը աճել է և արդեն 2014թ. կազմել 74.2%:

ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ



Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի ավելացմանը զուգահեռ նկատելիորեն բարձրացել է նաև գյուղատնտեսական հիմնական արտադրատեսակների բերքատվությունը:

#### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆ, Ց/ՀԱ

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Խոշոր եղջերավոր կենդանիներ	571.4	599.2	661.0	677.6	688.6
այդ թվում՝ կովեր	272.6	283.3	303.3	309.6	313.9
Ոչխարներ և այծեր	532.3	590.2	674.7	717.6	745.8
Խոզեր	114.8	108.1	145.0	139.8	142.4
Թռչուններ	3462.5	4023.5	4050.0	4101.2	4145.5

Անասնաբուծության ենթաճյուղում ևս վերջին տարիներին նկատելի են դրական տեղաշարժեր: Մասնավորապես ապահովվել է ինչպես գյուղատնտեսական կենդանիների և թռչնի գլխաքանակի, այնպես էլ անասնաբուծական հիմնական մթերքի արտադրության շարունակական աճ:

#### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԹՌՉՆԻ ԳԼԽԱՔԱՆԱԿ, ՀԱԶԱՐ ՀԱՏ

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Կենդանի և թռչուն սպանդի համար, 1 000տ	124.3	127.9	130.3	146.8	163.3
Կաթ, 1 000տ	600.9	601.5	618.2	657.0	700.4
Ձու, մլն. հատ	702.2	633.6	658.1	615.2	641.8
Բուրդ (ֆիզիկական քաշով), տ	1188.0	1230.0	1280.3	1426.0	1477.0

#### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	20.7	27.9	26.5	30.8	31.8
Կարտոֆիլ	170.1	194.3	206.7	214.3	232.2
Բանջարեղեն	294.2	306.7	325.0	333.7	350.5
Բոստանային մշակաբույսեր	4476.0	5764.0	5128.0	5356.0	5832.0

Գյուղատնտեսության վարկավորումը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 142.3 մլրդ դրամ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 22.3%:

Ընդհանուր վարկերի կառուցվածքում գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի մասնաբաժինը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 7.5%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6.5%-ի դիմաց

## 5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ


Արդյունաբերության աճի տեմպը կազմել է 104.8%: Տարեսկզբից աճը շարունակվում է առավել բարձր տեմպով: Արդյունաբերության կառուցվածքում շարունակում է գերակշռել մշակող արդյունաբերության մասնաբաժինը, որի նպաստման չափը հաշվետու ժամանակահատվածում բացասական է:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՃԻ ՏԵՄՊ, %  
2015թ., ԱՃՈՂԱԿԱՆ**

	Արտադրանքի ծավալ մլրդ. դրամ	Աճ 2014թ. նույն ժ/2 նկատմամբ, %	Կառուց- վածք, %	Նպաստման չափ, տոկո- սային կետ
<b>Արդյունաբերություն</b>	948.3	4.8	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	164.4	40.5	17.3	6.4
Մշակող արդյունաբերություն	597.1	-3.8	63.0	-2.5
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	171.3	4.7	18.1	0.8
Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	15.5	9.9	1.6	0.1

Արդյունաբերության աճին նպաստել են հետևյալ ճյուղերը. «Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործում»,՝ աճի տեմպը 140.5%, «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում»,՝ աճի տեմպը 104.7%, «Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում»,՝ աճի տեմպը 109.9%:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ  
2015թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԵԴԻՑԻՆԻ**




Հաշվետու ժամանակահատվածում Բելառուսի արդյունաբերությունը նվազել է 7.1%, Ռուսաստանի Դաշնությանը՝ 3.2%, Ղազախստանինը՝ 1.0%: Ղրղզստանում արդյունաբերության աճը կազմել է 17.4%, Աղրբեջանում՝ 6.4%, Ավստրիայում՝ 1.2%, Ֆրանսիայում՝ 1.1%:

Մշակող արդյունաբերությունում գրանցվել է 3.8% նվազում, որը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող «Սննդամթերքի արտադրության» (տեսակարար կշիռ՝ 35.6%) ենթաճյուղում գրանցված 6.3%, «Հիմնային մետաղների արտադրության» (տեսակարար կշիռ՝ 19.6%) ենթաճյուղի 15.2%, «Խմիչքների արտադրության» (տեսակարար կշիռ՝ 35.6%) ենթաճյուղի 21.5% նվազմամբ:

Չնայած մշակող արդյունաբերության ճյուղի նվազմանը՝ մշակող արդյունաբերության ենթաճյուղերից աճի տեսական է գրանցվել վերջինիս հետևյալ ենթաճյուղերում՝ «Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն»՝ 152.8%, «Արտադրատեսակների արտադրություն՝ չներառված խմբավորումներում»՝ 149.3%, «Կահույքի արտադրություն»՝ 138.5%, «Դեղագործական արտադրանքի արտադրություն»՝ 127.5%, «Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն»՝ 126.4%, «Հագուստի արտադրություն»՝ 109.4%, «Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն»՝ 108.6%:

Արդյունաբերության ոլորտին տրամադրված առևտրային վարկերի ծավալը հաշվետու ժամանակահատվածի վերջին կազմել է 388 մլրդ դրամ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 1.8%:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ  
ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՃԻ ՏԵՍՊԸ, %



Արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերի մասնաբաժինն ընդհանուր վարկերի ծավալում կազմել է 20.3%, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 21.2%-ի դիմաց:


**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԸՆՏԱԿԱՆԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԿՆԻՉ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ, 2015թ. ՀՈՒՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ**

		Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Աճ 2014թ. նոյն ժ/շ նկատմամբ, %	Կառուց-վածք, %	Արդյունաբերության աճին նպաստման	Պատրաստի արտադրանքի իրացում, մլրդ դրամ	Արտահանում, իրացման նկատմամբ, %	
	Արդյունաբերություն	948.3	4.8	100.0	-	950.8	377.0	39.7
B	Հանրագործական արդյունաբերություն և բազահանքեղի շահագործում	164.4	40.5	17.3	6.4	151.7	125.3	82.6
07	Մետաղական հանքաքարի արդյունահանում	161.0	41.7	17.0	6.4	147.8	124.2	84.0
08	Հանրագործական արդյունաբերության և բազահանքեղի շահագործման այլ ճյուղեր	3.5	-4.6	0.4	0.0	3.8	1.1	27.9
C	Մշակող արդյունաբերություն	597.1	-3.8	63.0	-2.5	612.4	229.2	37.4
10	Սննդամթերքի արտադրություն	212.6	-6.3	22.4	-1.5	211.6	10.8	5.1
11	Խմիչքների արտադրություն	70.8	-21.5	7.5	-2.1	71.0	35.3	49.7
12	Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	65.6	52.8	6.9	2.6	77.4	56.1	72.5
13	Մանածագործական արտադրատեսակների արտադրություն	0.4	-15.0	0.0	0.0	0.6	0.0	0.9
14	Հագուստի արտադրություն	6.4	9.4	0.7	0.1	6.4	2.8	44.2
15	Կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն	0.9	-0.1	0.1	0.0	0.8	0.3	32.2
16	Փայտանյութի մշակում, բացի կահույքից	1.1	-0.6	0.1	0.0	1.2	0.1	5.9
17	Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	14.1	26.4	1.5	0.3	14.1	0.0	-
18	Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	11.7	24.0	1.2	0.2	11.7	0.1	-
20	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	6.5	8.6	0.7	0.1	6.8	0.7	10.3
21	Դեղագործական արտադրանքի արտադրություն	5.6	27.5	0.6	0.1	5.2	2.6	51.1
22	Ուտիինե և պաստմասսայից արտադրատեսակների արտադրություն	17.1	-6.7	1.8	-0.1	18.5	1.4	7.6
23	Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	32.6	-8.2	3.4	-0.3	31.4	3.1	10.0
24	Հիմնային մետաղների արտադրություն	116.8	-15.2	12.3	-2.1	120.7	100.4	83.1
25	Պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն	7.8	-21.5	0.8	-0.2	8.0	0.3	3.8
26	Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների	3.6	-3.8	0.4	0.0	3.5	1.5	41.8
27	Էլեկտրոնական սարքավորանքի արտադրություն	3.3	-25.9	0.4	-0.1	3.4	0.8	24.3
28	Մեքենաների և սարքավորանքի արտադրություն. Հներառված որիշ խմբավորումներում	2.7	13.6	0.3	0.0	2.7	0.7	26.3
30	Այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն	0.0	61.1	0.0	0.0	0.0	-	-
31	Կահույքի արտադրություն	2.2	38.5	0.2	0.1	2.1	0.2	8.0
32	Արտադրատեսակների արտադրություն, չներառված որիշ խմբավորումներում	13.6	49.3	1.4	0.5	13.6	12.0	87.8
33	Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում	1.6	16.1	0.2	0.0	1.6	0.0	0.2
D	Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	171.3	4.7	18.1	0.8	171.3	22.6	13.2
35	Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	171.3	4.7	18.1	0.8	171.3	22.6	13.2
E	Զրամատակարարում, կոյուի, թափոնների կառավարում և վերամշակում	15.4	9.9	1.6	0.1	15.4	-	-
36	Զրի հավաքում, մշակում և բաշխում	10.1	7.4	1.1	0.1	10.1	-	-
37	Կոյուի	1.7	3.8	0.2	0.01	1.7	-	-
38	Թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, նյութերի վերականգնում	3.7	21.2	0.4	0.1	3.7	-	-

## 6.ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 6.1 Առևտրի շրջանառություն

Առևտրի շրջանառությունը նվազել է 5.6%-ով: Առևտրի շրջանառությունը ծևավորող 58.4% տեսակարար կշիռ ունեցող մանրածախ առևտրի շրջանառությունը նվազել է 7.6%-ով, 38.1% տեսակարար կշիռ ունեցող մեծածախ առևտրինը՝ 1.9%-ով, իսկ 3.5% տեսակարար կշիռ ունեցող ավտոմեքենաների առևտրինը՝ 8.6%-ով: Առևտրի շրջանառության ամսական տվյալների դիտարկումը ցույց է տալիս, որ միտումը որոշակիորեն վերափոխվում է դրականի:



Առևտրի ցուցանիշի նվազումը շարունակում է հիմնականում պայմանավորված մնալ արտաքին մասնավոր տրանսֆերտների ծավալի կրճատմամբ Արտաքին մասնավոր տրանսֆերտների ծավալը 2015թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում նվազել է 31.9%-ով:

Միաժամանակ, բացասական միտումը որոշակիորեն փոխհատուցվում է միջին ամսական անվանական աշխատավարձի աճին զուգահեռ ամսական կտրվածքով տրանսֆերտների ծավալների նվազման դանդաղմամբ,

Մանրածախ առևտրի կառուցվածքում շարունակում է գերակշռել խանութների միջոցով իրականացվող առևտուրը, որի տեսակարար կշիռը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 70.9%, 2014թ. նույն ժամանակաշրջանում 72.4%-ի դիմաց:


Առևտրի վարկավորման ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 338.0 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 6.7%:

Առևտրի վարկավորման տեսակարար կշիռը վարկերի ընդհանուր ծավալում կազմել է 17.5%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 19.9% դիմաց:

## 6.2 Ծառայություններ


Ծառայությունների ծավալի աճի տեմպը կազմել է 102.5%: Աճին նպաստել են հետևյալ ծառայությունները՝ «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն»՝ աճի տեմպը՝ 108.6% (տեսակարար կշիռը՝ 23.5%), «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ»՝ աճի տեմպը՝ 169.3% (տեսակարար կշիռը՝ 14.2%) և «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»՝ աճի տեմպը՝ 103.4% (տեսակարար կշիռը՝ 5.1%):

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԻ ՏԵՄՊ, ԱՃՈՂԱԿԱՆ, %



Թեև ծառայությունների մյուս տեսակների գծով գրանցվել է նվազում, սակայն որոշ ծառայությունների հատվածներում գրանցվել են աճեր: Մասնավորապես, «Տեղեկատվություն և կապ» ծառայությունում նվազումը կազմել է 2.0%, սակայն վերջինիս հատված հանդիսացող «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական ծառայությունների» աճի տեմպը կազմել է 117.4% (հեռահաղորդակցություն ենթախմբի ցուցանիշը, որի տեսակարար կշիռը կազմում է SCS ծառայությունների մոտ 70%, նվազել է 6.5%-ով), «Կացություն և հանրային սնունդ» ծառայության ծավալի 0.7% նվազման դիմաց վերջինիս հատված հանդիսացող «Կացության կազմակերպում» ծառայության աճի տեմպը կազմել է 107.1%, «Տրանսպորտ» ծառայության նվազումը կազմել է 25.4%, սակայն վերջինիս հատված հանդիսացող «Փոստային ծառայության» աճի տեմպը կազմել է 107.6%:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



2015թ. 9 ամիսներին ծառայությունների կառուցվածքում առաջատար են ֆինանսական և ապահովագրական գործունեությունը (տեսակարար կշիռը 23.5%) և տեղեկատվություն և կապը (տեսակարար կշիռը 18.9%): 2010թ. 9 ամիսների համեմատությամբ ծառայությունների կառուցվածքում նվազում է գրանցվել «Տրանսպորտ» և «Տեղեկատվություն և կապ» ծառայությունների գծով: Մնացած բաժիններում էական փոփոխություն չի գրանցվել:

### 6.3 Այլ ծառայություններ

2010-2014թթ. համեմատությամբ 2015թ. գրանցվել է նվազում SCS ոլորտի բոլոր ենթաճյուղերում:

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՐՐԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏԻ ՀԻՄԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

	2010-9	2011-9	2012-9	2013-9	2014-9	2015-9
<b>SCS ոլորտի ծավալ, մլրդ դրամ</b>						
SCS, այդ թվում	141.5	141.0	155.5	171.1	173.1	170.8
արտադրություն	1.2	1.3	1.4	1.4	1.6	0.4
առևտուր	6.4	12.9	14.2	20.8	21.2	20.6
ծառայություններ, որից՝	133.8	126.8	139.9	148.8	150.3	148.9
հեռահաղորդակցություն	119.5	118.1	122.9	127.7	128.0	119.7
<b>SCS ոլորտի աճ, %</b>						
SCS, այդ թվում	4.0	0.3	4.6	12.3	0.9	-2.6
արտադրություն	26.3	7.1	-12.2	-0.1	16.5	-13.9
առևտուր	81.4	25.6	8.7	38.8	0.1	-8.3
ծառայություններ, որից՝	1.9	-1.6	4.4	9.8	0.8	-1.7
հեռահաղորդակցություն	1.0	-1.5	2.6	8.7	0.2	-6.5

2015թ. ինը ամիսներին նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ գրուաշրջիկների թվի նվազում է արձանագրվել, ինչպես ժամանողների, այնպես էլ մեկնողների գծով: Է:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

	2010-9	2011-9	2012-9	2013-9	2014-9	2015-9
<b>Զբոսաշրջիկների թվաքանակ, հազար մարդ</b>						
Ժամանողներ	487.9	551.6	603.1	677.9	941.2	932.6
Մեկնողներ	474.6	546.2	608.2	678.8	886.3	874.4
<b>Զբոսաշրջիկների թվաքանակի աճ, %</b>						
Ժամանողներ	15.6	13.1	9.3	12.4	38.8	-0.9
Մեկնողներ	19.2	15.1	11.4	11.6	30.6	-1.3

2015թ. երրորդ եռամյակում հանրապետություն են ժամանել 443 087 զբոսաշրջիկներ (2015թ. հունվար-սեպտեմբերի ցուցանիշի 47.5%), կամ 2014թ. նույն ժ/շ նկատմամբ ցուցանիշը նվազել է 0.2%-ով: 2015թ. երրորդ եռամյակում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 409 296 մարդ, կամ 2014թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը նվազել է 0.2%-ով:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտներում 2015թ. 3-րդ եռամյակում տեղավորվել են 55 372 գրոսաշրջիկներ (աճը 2014թ. 3-րդ եռամյակի նկատմամբ՝ 16.3%), որոնցից 19.2%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 28.8%-ը՝ ԵՄ երկրներին և 52.0%-ը՝ այլ երկրներին:

2015թ. հունվար-սեպտեմբերին ներքին գրոսաշրջության գծով գրանցվել է 0.4% նվազում: Հիմնականում այն բուժման նպատակով՝ 27.4% և գործնական նպատակով՝ 10.1% այցելությունների նվազման հետևանք:

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏԾՈՒՐ


Արտաքին առևտրաշրջանառությունը 2014թ. նոյն ժ/շ նկատմամբ կրճատվել է 19.5%-ով, արտահանումը՝ 0.9%-ով, իսկ ներմուծումը՝ 26.6%-ով:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏԾԻ ԾԱՎԱԼ ԵՎ ԱՃ

	2010-9	2011-9	2012-9	2013-9	2014-9	2015-9
<b>Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար</b>						
Արտահանում	726.2	973.3	1032.0	1088.6	1105.7	1095.7
Ներմուծում	2659.8	2974.6	3009.6	3081.0	3218.2	2361.7
Առևտրաշրջանառություն	3386.0	3947.9	4041.6	4169.6	4323.9	3457.4
Առևտրի հաշվեկշիռ	-1933.6	-2001.3	-1977.6	-1992.4	-2112.6	-1266.1
<b>Արտաքին առևտրի աճ, %</b>						
Արտահանում	48.2	34.0	6.0	10.6	1.9	-0.9
Ներմուծում	18.4	11.8	1.2	2.5	4.6	-26.6
Առևտրաշրջանառություն	23.7	16.6	2.4	4.5	3.7	-20.0

**Արտահանում:** Ըստ երկրների խմբերի արտահանման կառուցվածքում շարունակում են գերակշռել այլ երկրները՝ 52.6% (2014թ. նոյն ժ/շ՝ 45.7%), որոնց գծով գրանցվել է արտահանման 12.6% աճ: ԵՄ երկրների մասնաբաժինը կազմել է 30.2% (2014թ. նոյն ժ/շ՝ 32.1%), որոնց գծով արտահանումը նվազել է 2.5%-ով, իսկ ԱՊՀ երկրների մասնաբաժինը կազմել է 17.2% (2014թ. նոյն ժ/շ՝ 22.1%), որոնց գծով գրանցվել է 25.9% նվազում:

ԱՐՏԱԿԱՆ ԱՌԵՎՏԾԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ  
ԸՆՏ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, %




2014թ. ինը ամիսների համեմատությամբ այլ երկրների հետ արտահանման ծավալների աճին հիմնականում նպաստել են Իրաք՝ 64.5%, Կանադա՝ 24.9%, Վրաստան՝ 29.4%, Թուրքիա՝ 20.8% և Չինաստան՝ 11.9% արտահանման աճերը: ԵՄ երկրների հետ արտահանման նվազումը պայմանավորված է Լիտվա՝ արտահանման 43.2%, Նիդերլանդներ՝ 35.0%, Չեխիա՝ 20.6, Բելգիա՝ 16.3%, Գերմանիա՝ 9.0% նվազմամբ:

Արտահանման աճ է գրանցվել ԵՄ հետևյալ երկրների գծով՝ Իտալիա՝ 47.3%, Ֆրանսիա՝ 16.6%: ԱՊՀ երկրներ արտահանման ծավալների նվազումը պայմանավորված է, բացառությամբ Թուրքմենստանի, մնացած երկների հետ արտահանման ծավալների զգալի նվազմամբ, մասնավորապես, ՌԴ՝ 27.8%, Բելառուս՝ 36.5%, Ղազախստան՝ 20.0%:

Արտահանման աճ է գրանցվել հետևյալ ապրանքային բաժիններում. «Բուսական ծագման արտադրանք»՝ 30.3%, «Հանքահումքային արտադրանք»՝ 22.0%, «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք»՝ 10.6%, «Փայտ և փայտյա իրեր»՝ 50.2%, «Թուղթ և թղթից իրեր»՝ 36.6%, «Մանածագործական իրեր»՝ 56.9%, «Սարքեր և ապարատներ»՝ 20.0%:

**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %**




Արտահանման նվազում է գրանցվել հետևյալ ապրանքային բաժիններում. «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր»՝ 35.0%, «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»՝ 33.3%, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր»՝ 33.0%, «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք»՝ 20.0%, «Պատրաստի սննդի արտադրանք»՝ 10.8%, «Իրեր քարից, գիպսից և ցեմենտից»՝ 50.9%, «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ 8.5%:

Տարեսկզբին գրանցված զգալի նվազման դիմաց, արտահանման ծավալները (չնայած արտաքին առևտուրի որոշակիորեն անբարենպաստ պայմանների՝ հանքահումքային արտադրանքների համաշխարհային գների նվազում, արտարժութային շուկայում տարեսկզբին գրանցված և դեռևս ոչ ամբողջությամբ կայունացած շուկեր) ընդհանուր առմամբ վերականգնողական միտումներ են դրսնորում, ինչը թույլ է տալիս տարվա կտրվածքով ակնկալել արտահանման աճ:


**Ներմուծում:** Ըստ Երկրների խմբերի ներմուծման մեջ 2015թ. ինը ամիսներին նույնպես շարունակում են գերակշռել այլ Երկրները՝ 49.9% (2014թ. նույն ժ/շ՝ 51.6%), որոնց գծով ներմուծումը նվազել է՝ 29.0%-ով: ԵՄ Երկրների մասնաբաժինը կազմել է 25.2% (2014թ. նույն ժ/շ՝ 26.0%), որոնց գծով ներմուծումը նվազել է 29.7%-ով, իսկ ԱՊՀ Երկրների մասնաբաժինը կազմել է 24.8% (2014թ. նույն ժ/շ՝ 22.4%), որոնց գծով գրանցվել է 19.4% նվազում:

**ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ  
ԸՆՏԵՐԿՈՒՄՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, %**



Այլ Երկրների հետ ներմուծման ծավալների նվազումը պայմանավորված է հետևյալ Երկրներ ներմուծման ծավալների նվազմամբ՝ Վրաստան՝ 49.1%, ԱՄՆ՝ 29.3%, Չինաստան՝ 25.9%, Թուրքիա՝ 24.4%, Կանադա՝ 10.6% և Իրան՝ 9.8%: ԵՄ Երկրների հետ ներմուծման ծավալների նվազումը պայմանավորված է հետևյալ Երկրներ ներմուծման ծավալների նվազմամբ. Նիդերլանդներ՝ 57.0%, Բելգիա՝ 41.7%, Իտալիա՝ 25.9%, Միացյալ Թագավորություն՝ 26.6%, Գերմանիա՝ 22.8%: Ներմուծման աճ է գրանցվել Դանիայի, Չեխիայի և Կիպրոսի հետ՝ համապատասխանաբար՝ 87.2%, 27.3% և 20.7%: ԱՊՀ Երկրներ ներմուծման ծավալների նվազումը պայմանավորված է Թուրքմենստանից՝ 24.2%, Բելառուսից՝ 51.3%, Ղազախստանից՝ 15.4% և ՌԴ-ից՝ 12.9%-ով ներմուծման ծավալների նվազմամբ:

**ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %**




Ապրանքային բաժիններով ներմուծման աճ չի գրանցվել: Առավել կտրուկ նվազում է գրանցվել հետևյալ ապրանքային բաժիններով. «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ 64.5%, «Փայտ և փայտյա իրեր»՝ 41.6%, «Տարբեր արդյունաբերական ապրանքներ»՝ 47.7%, «Մերենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»՝ 30.7%, «Հանքահումքային արտադրանք»՝ 19.6%, «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք»՝ 17.1%, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր»՝ 17.0%:

## 8. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀՈՍՔԵՐ

Օտարերկրյա պետությունների կողմից 2015թ. ինը ամիսների ընթացքում ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված ընդհանուր ներդրումների գուտ հոսքերի ծավալը կազմել է 141.6 մլրդ ՀՀ դրամ (296.3 մլն ԱՄՆ դոլար), որից ուղղակի ներդրումների գուտ հոսքերը՝ 125.1 մլրդ ՀՀ դրամ (262.0 մլն ԱՄՆ դոլար): Նախորդ տարվա համապատասխան Ժ/Հ համեմատ ընդհանուր ներդրումների գուտ հոսքերն աճել են 38.0 մլրդ դրամով (79.5 մլն ԱՄՆ դոլար), իսկ ուղղակի ներդրումների գուտ հոսքերը՝ 18.0 մլրդ դրամով (37.6 մլն ԱՄՆ դոլար):

### ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶՈՒՏ ՀՈՍՔԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ, ՄԼՐԴ ԴՐԱՄ



Շվեյցարիան գլխավորապես ներդրել է հանքագործական արդյունաբերությունում, Գերմանիան՝ հանքագործական արդյունաբերությունում և հիմնային մետաղների արտադրությում, Լյուքսեմբուրգը՝ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման և խմիչքների արտադրության ոլորտներում, Ռուսաստանի Դաշնությունը՝ դեղագործական արտադրանքի արտադրության, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, հեռահաղորդակցության, մեծածախ առևտրի (բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից) և հիմնային մետաղների արտադրությունում, ԱՄԷ-ն՝ մեծածախ առևտրի (բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից) ոլորտում, իսկ Ֆրանսիան՝ խմիչքների արտադրությունում, հեռահաղորդակցություն և ջրի հավաքում, մշակում և բաշխում ենթաճյուղում: Իրական հատվածում կատարված օտարերկրյա ընդհանուր ներդրումների հոսքերի կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն Շվեյցարիան՝ 31.5%, Գերմանիան՝ 21.0%, Լյուքսեմբուրգը՝ 19.9% և Ռուսաստանը՝ 10.1%, ԱՄԷ-ն՝ 7.1% և Ֆրանսիան՝ 6.9%:

Ներդրումները հիմնականում ուղղվել են հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր (58.9 մլրդ ՀՀ դրամ՝ ընդհանուր ներդրումների 41.6%), էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման (37.3 մլրդ ՀՀ դրամ՝ ընդհանուր ներդրումների 26.3%), հիմնային մետաղների արտադրության (17.9 մլրդ ՀՀ դրամ՝ ընդհանուր ներդրումների 12.7%), մեծածախ առևտուրի (բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտուրից) (11.9 մլրդ ՀՀ դրամ՝ ընդհանուր ներդրումների 8.5%) և խմիչքների արտադրության (10.6 մլրդ ՀՀ դրամ՝ ընդհանուր ներդրումների 7.5%) ճյուղեր:

**Փոխադարձ օտարերկրյա ուղղակի ներդրումների համաթիվը (ՓՕՌՆ)** գնահատում է երկրների ներդրումային փոխապակցվածության աստիճանը: Համաթիվը մշակվել է Եվրասիական զարգացման բանկի կողմից և հրապարակվում է 2014թ.-ից: 2015թ. վերլուծականում ներառված են նոր և ճշգրտված վիճակագրական ցուցանիշներ, որոնք հնարավորություն են ընձեռում ներկայացնել վերլուծությունը 4 տարվա կտրվածքով:

**ՓՕՌՆ-ի համաթիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.**

$$I = (A + B + 0.5(A - A' + B - B')) / (GDP_A + GDP_B) \cdot 1000k,$$

որտեղ՝  $k = \sqrt{(InA)^2 + 3(InB)^2} / \sqrt{(InA)^2}$ :  $k$  գործակիցը փոփոխավում է 1-ից 2 միջակայքում, այսինքն՝ առանձին դեպքերում ուժեղանում է ՓՕՌՆ ցուցանիշը: Գործակիցը ներառելու հիմնական նպատակը երկրների ներդրումային զույգում ներդրումների մեծությամբ երկրորդ գործընկեր երկրին ավելի մեծ դերակատարում շնորհեն է այն նպատակով, որպեսզի ակնհայտ չառանձնանան այն ներդրող երկրների գույգերը, որտեղ երկրներից մեկը գերակշռում է:

I-ն՝ ՓՕՌՆ-ի համաթիվն է,

A-ն՝ Ա երկրի կուտակված OՌՆ-երը B երկրում դիտարկվող ժամանակաշրջանի վերջում,

B-ն՝ B երկրի կուտակված OՌՆ-երը A երկրում դիտարկվող ժամանակաշրջանի վերջում,

A'-ն՝ A երկրի կուտակված OՌՆ-երը B երկրում երեք տարի առաջ,

B'-ն՝ B երկրի կուտակված OՌՆ-երը A երկրում երեք տարի առաջ,

GDPA-ն՝ A երկրի ՀՆԱ-ն դիտարկվող տարում (տվյալները՝ ՀԲ 2015թ.),

GDPB-ն՝ B երկրի ՀՆԱ-ն դիտարկվող տարում (տվյալները՝ ՀԲ 2015թ.):

2014թ. ԵՏՄ տարածաշրջանում տնտեսության մեջ ՓՕՌՆ-երի առաջատար հատվածներ են վառելիքային համայիրը (39.7%) և գունավոր մետալուրգիան (15.8%): Վերջիններիս մասնաբաժինը էականորեն մեծ է, քան միևնույն ցուցանիշները ԱՊՀ երկրների և Վրաստանի փոխադարձ ներդրումներում և կազմում է համապատասխանաբար 33.9% և 9.3%: Միևնույն ժամանակ կապ և նորարարական տեխնոլոգիաներ հատվածում (9.6%), ֆինանսական հատվածում (6.0%) և ենթակառուցվածքի ցանցերում (3.8%) կատարված ՓՕՌՆ-երը ԵԱՏՄ տարածաշրջանում բավականին ցածր է՝ համեմատած ամբողջ հետխորհրդային տարածաշրջանի նույն ցուցանիշների հետ և կազմում են համապատասխանաբար 12.1%, 7.8% և 7.1%:


**ՓՕՌՆ-ի ՀԱՄԱՁԻՎԸ 2011-2014թթ.**

Ներդրումային գույգի ՕՌՆ-երի ծավալով առաջատարը	Ներդրումային գույգի երկրորդ երկիրը	ՓՕՌՆ-երի ծավալը 2014թ. վերջում, մլն դոլար	ՓՕՌՆ-ի համաթիվը 2011թ.	ՓՕՌՆ-ի համաթիվը 2012թ.	ՓՕՌՆ-ի համաթիվը 2013թ.	ՓՕՌՆ-ի համաթիվը 2014թ.
Ռուսաստան	Հայաստան	3048	2.21	2.26	2.36	2.77
Հայաստան	Վրաստան	15	0.47	0.79	0.77	0.66
Հայաստան	Բելառուս	14	0.05	0.48	0.41	0.42
Ղազախստան	Հայաստան	10	0.11	0.10	0.09	0.07

Ղազախստանում, Բելառուսում, Հայաստանում և Ղրղզստանում ոռւսական ներդրողների 10 խոշոր ծրագրերին 2014թ. ավարտին բաժին է ընկնում ԵԱՏՄ տարածաշրջանում կուտակված ոռւսական ընդհանուր ՕՌՆ-երի մոտ 60%-ը: Խոշոր նախագծերի մեծ մասը կապված է ինժիներական ենթակառուցվածքների ոլորտում կատարված կապիտալ ներդրումների հետ, իհարկե, ինչպես ամենաբազմազանը հանդիսացող նավթի և գազի տեղափոխման հետ կապված, այնպես էլ բջջային հեռախոսակապի ապահովման և երկաթգծային տրանսպորտի գարգացման հետ կապված (առաջին հերթին «ՐԺԴ» Հայաստան):


## 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

### ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ, %



Աղքատության մակարդակի նվազումը չի ուղեկցվել եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության կրճատմամբ: Չնայած աղքատության գծերի աճին՝ 2014թ. նվազել են աղքատության բոլոր տեսակները:

### ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳԾԵՐ, ՀԱԶԱՐ ԴՐԱՄ




Աղքատության մակարդակի նվազումը չի ուղեկցվել եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության կրճատմամբ: 2008թ. սկսած Զինիի գործակիցները ինչպես ըստ եկամուտների, այնպես էլ ըստ սպառման շարունակում են խորանալ: Ընդ որում, եթե ըստ եկամուտների անհավասարությունը վեցին երեք տարիներին որոշակիորեն կայուն է եղել, ապա ըստ սպառման անհավասարությունը նկատելիորեն խորացել է:

	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Զինիի գործակից (ըստ եկամուտների)	0.339	0.355	0.362	0.371	0.372	0.372	0.373
Զինիի գործակից (ըստ սպառման)	0.242	0.257	0.265	0.267	0.269	0.271	0.277
Աղքատության խորություն, %	5.1	7.8	8.1	7.9	5.6	5.9	4.5
Աղքատության սրություն, %	1.4	2.4	2.5	2.4	1.6	1.7	1.3

## 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ 2015-2016թ ԻՆԴԵՔՍՈՒՄ

### Հայաստանը՝

- 2015-2016թ. ինդեքսում 4.0 միավորով զբաղեցնում է 82-րդ տեղը 140 երկրների շարքում
- Բարելավել է իր դիրքը 3 տեղով, պահպանել է նախորդ տարվա միավորը
- Հայաստանը դասվում է Արյունավետության վրա հիմնված փուլին
- Ըստ տարածաշրջանի ընդգրկված է ԱՊՀ երկրների խմբում
- Գնահատված ԱՊՀ երկրների շարքում 7-րդն է (ներառյան Վրաստանը)
- Հարևան երկրների շարքում վերջին տեղում է



	2015-2016	Փոփոխություն	2015-2016	Փոփոխություն
Գլոբալ մրցունակության ինդեքս	82	▲ 3	4.0	= 0.0
Հիմնական պահանջներ	81	▲ 1	4.4	= 0.0
Ինստիտուտներ	76	▼ -4	3.8	= 0.0
Ենթակառուցվածքներ	82	▼ -4	3.7	▼ -0.1
Մակրոտնտեսական միջավայր	72	▲ 5	4.7	▲ 0.1
Առողջապահություն և տարրական կրթություն	95	▲ 4	5.4	▲ 0.1
Արյունավետության խթաններ	84	▲ 3	3.8	= 0.0
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	72	▲ 3	4.3	▲ 0.1
Ապրանքների շուկայի արյունավետություն	50	▲ 14	4.5	▲ 0.1
Աշխատուժի շուկայի արյունավետություն	58	▲ 16	4.3	▲ 0.1
Ֆինանսական շուկաների զարգացում	94	▲ 3	3.5	▼ -0.2
Տեխնոլոգիական պատրաստվածություն	75	▼ -4	3.7	= 0.0
Շուկայի չափ	116	▲ 2	2.8	= 0.0
Նորարարության և կատարելագործվածության գործոններ	101	▼ -1	3.3	▲ 0.0
Գործարարության կատարելագործվածություն	97	▼ -4	3.7	▼ -0.1
Նորարարություն	107	▼ -3	3.0	▲ 0.0

